ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի խորհուրդ

*30.09.2016թ. նիստի*

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N10**

*Ներկա էին՝* *Խորհրդի 18 անդամներից 14-ը:*

*Լսեցին՝*

1. Առաջարկվեց հաստատել ՏՏԿՀ կենտրոնի 1-ին տարվա ասպիրանտ Դավիթ Գարեգինի Սարգսյանի թեման՝ «Էլեկտրոնային համակարգերի ֆունկցիոնալ անվտանգության պահանջներին բավարարող թեստային ծրագրերի ավտոմատացված գեներացիա և դրանց որակի հիմնավորում», մասնագիտությունը՝ «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում», դասիչը՝ Ե.13.04:

*Որոշեցին՝* Հաստատել Դավիթ Սարգսյանի ատենախոսության թեման (միաձայն):

*Լսեցին՝*

2. Առաջարկվեց նշանակել տ.գ.թ. Գ. Հարությունյանին Ե.13.04 մասնագիտությամբ ասպիրանտ Դավիթ Սարգսյանի ատենախոսության գիտական ղեկավար:

*Որոշեցին՝* Հաստատել Դավիթ Սարգսյանի ատենախոսության գիտական ղեկավարին (միաձայն):

*Լսեցին՝*

3. Առաջարկվեց հաստատել ՏՏԿՀ կենտրոնի 1-ին տարվա ասպիրանտ Դավիթ Լևոնի Հայրապետյանի թեման՝ «Բյուրեղի վրա սխալների առկայությամբ հիշող հանգույցների ներկառուցված թեստավորման գործընթացը մոդելավորող ծրագրային գործիքի հիմնավորում և մշակում», մասնագիտությունը՝ «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում», դասիչը՝ Ե.13.04:

*Որոշեցին՝* Հաստատել Դավիթ Հայրապետյանի ատենախոսության թեման (միաձայն):

*Լսեցին՝*

4. Առաջարկվեց նշանակել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ս. Շուքուրյանին Ե.13.04 մասնագիտությամբ ասպիրանտ Դավիթ Հայրապետյանի ատենախոսության գիտական ղեկավար:

*Որոշեցին՝* Հաստատել Դավիթ Հայրապետյանի ատենախոսության գիտական ղեկավարին (միաձայն):

*Լսեցին՝* 5. Առաջարկվեց հաստատել ՏՏԿՀ կենտրոնի հայցորդ Արտյոմ Ռուբենի Թոփչյանի թեման՝ «Տվյալներով պայմանավորված կառավարման նախագծերի իրականացմանը աջակցող ճարտարապետություն ժամանակակից ձեռնարկությունների համար», մասնագիտությունը՝ «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում», դասիչը՝ Ե.13.04:

*Որոշեցին՝* Հաստատել Արտյոմ Թոփչյանի ատենախոսության թեման (միաձայն):

*Լսեցին՝* ՏՏԿՀ կենտրոնի կողմից շահած 2 նոր դրամաշնորհի մասին:

Խորհրդի նախագահ՝ Ս.Կ. Շուքուրյան

Խորհրդի քարտուղար՝ Գ.Է. Հարությունյան